



ԳԵՂԱՄՆ

Մշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 13 ապրիլի 2026թ. թիվ 7 (635)

ԱՆԴԱՍՏԱՆ



Արեւելյան կողմն աշխարհի հաղաղությունն թող ըլլա... Ո՛չ արյուններ, քրտինք հոսին Լայն երակին մեջ ակոսին.

Ու երբ հնչե կոչնական ամեն գյուղակի՝ Օրհներգությունն թող ըլլա:

Արեւմտյան կողմն աշխարհի Բերրիությունն թող ըլլա... Ամեն աստղե ցող կայլակի, Ու ամեն հասկ ծուլե ոսկի. Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝ Ծիլ ու ծաղիկ թող ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի Առատությունն թող ըլլա... Ոսկի ծովուն մեջ ցորյանին Հավետ լողա թող գերանդին. Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝ Բերկրությունն թող ըլլա:

Հարավային կողմն աշխարհի Պտղաբերունն թող ըլլա... Ծաղկի՛ մեղրը փեթակներուն, Հորդի գինին բաժակներուն. Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝ Սիրերգությունն թող ըլլա:

Դանիել Վարուժան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՒՒ ԱՌԹՎ



Հարգելի՛ մայրեր եւ կանայք, սրտանց շնորհավորում են ձեզ Մայրության եւ Գեղեցկության տոնի առթիվ: Մայրությունը սուրբ կոչում է, որը բացարձակապես ոչ մի արժեքով փոխարինել չի կհնում: Ձեր առատածեռն սերն ու հոգատարությունը, ազնիվ ջանքերը ընտանիքի եւ հասարակության առաջընթացի համար մշտապես արժանի են գովեստի ու հարգանքի: Ձեր գեղեցկությունը, ջերմությունն ու հոգատարությունը մի առանձնահատուկ ուժ են տալիս ամենբնույթի, որից աշխարհը դառնում է ավելի պայծառ ու լուսավոր: Ցանկանում են ձեզ ամուր առողջություն, անսահման երջանկություն, խաղաղություն եւ հոգու ներդաշնակություն: Թող ձեր կյանքը լեցուն լինի ուրախությամբ, նվիրումներով եւ այն բոլոր ջերմ պահերով, որոնք դուք ամուր պահում եք ձեր սրտերում:

ՆՈՐԱՏՈՒՄԻ ՍՈՒՐԲ ԱՄՏՎԱԾԱԾԻՆ ԵՎԵՂԵՑԻՆ

Մեր հոյակապ, հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ, Մի նշխարով, մի կուն ջրով եւ ճգնությամբ գիշերն անքուն Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն-եղեռները, նախճիրները հորդաների արյունոռուշտ, Փլուզումը հայրենիքի եւ ոսոխի սուրը անկուշտ: Եվ ողբացին լալահառաչ դժխեն բախտը Հայաստանի եվ հուսացին արդարության մի խուլ Աստծո դատաստանի... Ավետիք Իսահակյան

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին իր պատմաճարտարապետական, պատմական ու պատմամշակութային բացառիկ տեղն ունի ոչ միայն Գեղարքունիքի մարզի, այլ նաեւ բովանդակ Հայաստանի հուշարձանների շարքում:

Այն թեւ համարվում է 9-րդ դարի կառույց, որի հիմնադրումը կապվում է Սյունյաց Վասակ Գաբուռն իշխանի ու նրա կին Մարիամ Բագրատունու գավակ Սահակ իշխանի անվան հետ, սակայն եկեղեցու բակում մինչ օրս պահպանված անվավերագիր որոշ քառակող, կլոր կամ բազմանիստ քարակոթողներ այլ բանի մասին են փաստում այս կառույցի պատմությունը տեղափոխելով շատ ավելի վաղ ժամանակներ: Եկեղեցու կուռ ու բավականին ամուր հիմքը եւս ավելի շատ հիշեցնում է հեթանոսական տաճարների անխորտակ հիմքերը, որոնք բաղկացած էին հսկայական սրբատաշ քարաբեկորներից:

/շարունակությունը՝ էջ 4-ում/



ՀԱՅ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԻՆԸ ՀՈՒՓՈՒՄԵ ՄԵԾԱՏՈՒԹՅԱՆ

Հռիփսիմե Մեծատուրյանը մասնակցել է Սարգարապատի ճակատամարտին նորածին որդին գրկում. սա առաջին բանն էր, որ իմացա նրա մասին: Ես ցնցված էի: Որքա՞ն խիզախ եւ հայրենասեր պիտի լինես, որ երեխայիդ կյանքը վտանգելով կռվես մարտի դաշտում: Սկսեցի հնարավոր ամեն ինչ փնտրել Հռիփսիմեի մասին նրա կյանքի պատմությունը բացահայտելու համար: Բարեբախտաբար, ինձ հաջողվեց կապ հաստատել նրա թոռների՝ Կետ եւ Քրիս Սատուհիների հետ, որոնք սիրով օգնեցին խճանկարի պես հավաքել Հռիփսիմեի կյանքի իրադարձություններն ու ներկայացնել նրա անցած ուղին:

Հռիփսիմե Մեծատուրյանը ծնվել է 1893 թվականին, Բինկյանում (կամ Բենկա, ներկայիս Աղաթեփե, Թուրքիա), Թաթուլ եւ Հռիփսիմե Մեծատուրեանի ընտանիքում: Հայրը՝ Թաթուլ Մեծատուրյանը, հաջողակ գործարար էր, պապը՝ Աստվածատուր Մեծատուրյանը, ժամանակին եղել է Բինկյանի քաղաքապետը եւ ղեկավարել տեղի հայկական Մեսրոպյան դպրոցը: Մեծատուրյանների տոհմից էր հայ նաեւ անվանի գրող Միսաք Մեծարեցը. նա Հռիփսիմեի գարմիկն էր:

Երբ Հռիփսիմեն երեք տարեկան էր, Թաթուլ Մեծատուրեանը գործերով մեկնեց Պոլիս: Ու այդպես էլ չվերադարձավ՝ զոհ դառնալով 1894-1896 թվականների Համիդյան ջարդերին:

Հռիփսիմեի եղբայրը՝ ընտանիքի երրորդ զավակը, ծնվեց հոր մահից հետո: 1897 թվականին աղջկա մայրն ու հայրական տատը որոշեցին երեխաների հետ տեղափոխվել Սեբաստիա (ներկայիս Սիվաս, Թուրքիա)՝ Թաթուլի գարմիկների մոտ. հարազատների աջակցությամբ շատ




ավելի հեշտ էր մեծացնել երեխաներին եւ զբաղվել ընտանեկան հարցերով:

1907 թվականին Հռիփսիմեն ավարտեց Սեբաստիայի հայկական ավագ դպրոցը: Շուտով նրանք ընտանիքով տեղափոխվեցին Պոլիս, որտեղ Հռիփսիմեն քրոջ՝ Մաննիկի հետ ընդունվեց ամերիկյան «Ռոբերտ քոլեջը» (այն հեղինակավոր քոլեջ էր Պոլսում, հիմնադրված 1863 թվականին):

Քոլեջում սովորելու տարիներին նա սկսեց ակտիվորեն մասնակցել պոլսահայ հասարակական եւ մշակութային կյանքին: Շուտով նա համալրեց Հայ Հեղափոխական Դաշնակցության շարքերը, պարբերաբար մասնակցում էր կուսակցության ուսանողական ասոցիացիայի հավաքներին: 1910-ին Հռիփսիմեն պաշտոնապես դարձավ ՀՅԴ անդամ: Անդամագրվելու երդման արարողության ժամանակ նա որոշեց ընտրել Լեւա անունը եւ մինչ կյանքի վերջ ներկայացավ այդ անվամբ:

/շարունակությունը՝ էջ 6-ում/



ԿԱՅԱՑԵԼ ԵՆ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՐՉԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

2026 թվականի ապրիլի 6-ին եւ 8-ին Գագարինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճում անցկացվել են «ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի Գեղարքունիքի մարզային փուլի մրցումները, որին իրավունք էին ստացել մասնակցելու մրցաշարի համայնքային փուլի մրցումներում 1-ին 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված դպրոցական թիմերը:

Մրցումները անցկացվել են 2 տարիքային խմբերով: Առաջին տարիքային խումբում ընդգրկվել են 5-9-րդ դասարանների, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ 10-12-րդ դասարանների աշակերտները:

Ապրիլի 6-ին մրցապայքարի մեջ են մտել 1-ին տարիքային խմբի թիմերը, որի արդյունքում առաջին հորիզոնականը զբաղեցրել է Գագարինի միջնակարգ դպրոցի թիմը: Համապատասխանաբար երկրորդ եւ երրորդ տեղերը գրավել են Սարուխանի Ս. Խոստեղյանի անվան 3. 2 եւ Շատչրեքի միջնակարգ դպրոցների թիմերը:



Թիմերը: 2-րդ տարիքային խմբում հաղթողի համար մրցումները:

ցապայքարի մեջ են մտել Գավառի եւ Սեւանի խ. Արմյանի անվան ավագ դպրոցների թիմերը: Արդյունքում Սեւանի խ. Արմյանի անվան ավագ դպրոցի թիմը զբաղեցրել է առաջին հորիզոնականը:

Երկրորդ տեղը բաժին է հասել Գավառի ավագ դպրոցի թիմին, իսկ երրորդ տեղը՝ Թբուշրի միջնակարգ դպրոցի թիմին:

Մրցանակային տեղեր գրաված դպրոցական թիմերը պարգևատրվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության գավաթներով եւ հավաստագրերով:

2026 թվականի մայիսի 2-3-ը Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում կայանալիք «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի եզրափակիչ փուլի 1-ին տարիքային խմբում Գեղարքունիքի մարզը կներկայացնի Գագարինի միջնակարգ, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ Սեւանի խ. Արմյանի անվան ավագ դպրոցների թիմերը:

ԴԴՄԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 9 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ



Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Դդմաշենում կառուցվել է 4000 զծամետր երկկողմանի սալիկապատ մայթեր, 2320 մետր արտաքին լուսավորության ցանց, մանկական խաղահրապարակ, հիմնանորոգվել է հանրապետական ու ներհամայնքային նշանակության 7293 զծամետր ավտոճանապարհ, 1 կամուրջ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Դդմաշեն գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերով 2018-2025 թվականներին սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 9 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 1 միլիարդ 109 միլիոն 805 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրեց Դդմաշենի վարչական ղեկավար Գարիկ Ներսիսյանը, իրականացված ծրագրերից 6-ը սուբվենցիոն են՝ 218 միլիոն 414 հազար դրամ ընդհանուր արժեքով, 3-ը՝ պետական՝ 891 միլիոն 400 հազար դրամ արժեքով:

եւ հանդիսությունների սրահ:

Պետական ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է Սեւան-Ծաղկունք-Ձովաբեր հանրապետական նշանակության ավտոճանապարհի Դդմաշենի վարչական տարածքով անցնող 5100 զծամետր հատվածը, որից 2000 մետրը բնակավայրի ներսում, շուրջ 770 միլիոն դրամ արժեքով:

Պետական մեկ այլ ծրագրով, 109 միլիոն դրամ արժեքով, հիմնանորոգվել է Դդմաշեն մտնող ճանապարհի 1 կիլոմետրանոց վթարավտանգ հատվածը:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԾՐԱԿԱՑՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԳՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծովագյուղ բնակավայրի միջնակարգ դպրոցում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, 2025 թվականի հուլիսից սկսվել են ընթանում են վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ղեկավարները, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Ծովագյուղի Սուրբազանի անվան միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 497 միլիոն 874 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:



Ծրագրով նախատեսված է դպրոցական շենքի տանիքի, հատակի, աստիճանների, միջանցքների, դասասենյակների, սանհանգույցների, քեռուցման, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի վերանորոգում, նոր դռների տե-

ղադրում, ցանկապատի կառուցում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, այլ կարգի աշխատանքներ:

2026 թվականի մարտի 30-ի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտվել են շուրջ 70 տոկոսով: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում: Շինարարության ավարտից ու նոր գույքի ձեռքբերումից հետո Ծովագյուղի միջնակարգ դպրոցը կրթության կազմակերպման համար կունենա արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմանները:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹԻ ՄԱՐՉԱՊԵՏՈՒՄ ԱՌԱՋԻՆՅՈՒՄ ԿՄԵՆԱՐԿԵՆ ՏՐԻԲՈՒՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՄՅՈՒՄ ՄԱՆՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի մարզադաշտում առաջիկայում կմեկնարկեն տրիբունաների եւ մյուս մասնաշենքերի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, մարտի 27-ին ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաբյանը, ՀՀ Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիք-բեկյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը Վարդենիսի «Անդրանիկ» ֆուտբոլային ակումբի ղեկավար կազմի եւ այլ գործընկերների հետ շրջայց են կատարել Վարդենիսի մարզադաշ-

տում՝ տեղում քննարկելով հրատապ ու կարեւոր անելիքները:

Այստեղ արդեն կառուցվել է խոտածածկ մարզադաշտը, իսկ առաջիկայում կմեկնարկեն տրիբունաների եւ մյուս մասնաշենքերի կառուցման աշխատանքները:

Երբ պատրաստ լինեն տրիբունաներն ու միջազգային չափորոշիչներին համապատասխան մյուս ենթակառուցվածքները, Վարդենիսի «Անդրանիկ» թիմն արդեն տնային խաղերը կընդունի այս մարզադաշտում՝ ունենալով երկրպագուների մեծ բանակ: Բացի այդ, Վարդենիսում զարգացում կապրի մանկապատանեկան ֆուտբոլը, կանանց ֆուտբոլը, կատեղծվեն շատ աշխատատեղեր, մեզ մոտ աշխատանքի կիրավիրվեն միջազգային փորձ ունեցող մասնագետներ: Իսկ այդ օրվան բոլորս անհամբեր, սակայն հավատով ենք սպասում, ներկայացրեց ՀՀ Վարդենիսի ներկայա- մարզադպրոցի մեթոդիստ Դավիթ Դավթյանը:



«Գեղամա աշխարհ»

ՎԱՀԱՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի ճամբարակ համայնքի Վահան գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 6 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղումը կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 47 միլիոն 100 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրին ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, իրականացված ծրագրերից 4-ը սուբվենցիոն են՝ 109 միլիոն 100 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 2-ը՝ պետական՝ 968 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Վահանում կառուցվել է 12276 մետր երկարության խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 2000 մետր սալիկապատ



մայթեր, խմելու ջրի քլորակայան, օրվա կարգավորիչ ջրամբար, հիմնանորոգվել 5700 զծամետր մարզային ու ներհամայնքային նշանակության ճանապարհ, 2 կամուրջ:

Պետական ծրագրերով հիմնանորոգվել է ճամբարակ-Վահան 5700 զծամետր երկարության ճանապարհը, Վահանի միջնակարգ դպրոցի եւ մանկապարտեզի կարիքների համար կառուցվել 1000 մետր խմելու ջրատար, քլորակայան եւ օրվա կարգավորիչ ջրամբար:

«Գեղամա աշխարհ»

«Գեղամա աշխարհ»



գ. Նորատուս, եկեղեցի Սրբ. Աստվածածին 9-րդ դար

Նսկիզբը՝ էջ 1-ում/

Նորատուսի տարածքում պահպանված հնագույն դամբարանները, կիկլոպյան ամրոցները, շեների ավերակները հաստատում են մեր կարծիքն առ այն, որ մինչ այս շքեղ կառույցի հիմնունը այստեղ եղել է գործող կամ ավերված սրբավայր, որը նոր շունչ է առել Սահակ իշխանի ու նրա հաջորդների ժամանակներում:

Ի դեպ, Սահակ իշխանը հարազատ եղբայրն էր Գրիգոր Սուփան իշխանի, ում հովանավորությամբ ու ջանքերով Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղում վեր է խոյացել հռչակավոր Կոթավանքը, Մաքենիսում՝ Մաքենյաց վանքը, որոնք հանդիսացել են ինչպես պատմաճարտարապետական գլուխգործոցներ, այնպես էլ՝ նշանավոր հոգեւոր կենտրոններ ու դպրատներ:

Վեհաշուք եկեղեցին վեր է խոյացել Հայաստանում արաբական լծի թոթափումից հետո, երբ Բագրատունյաց արքայատոհմը խնամակալ կապերով կապվել է Սյունյաց հզոր իշխանապետության տերերի հետ, երբ մեկտեղվել են հայ ժողովրդի ու նախարարական առանձին տների ուժերը, եւ Հայոց հայրենիքը բռնել է վերելքի, տնտեսական ու կրթամշակութային զարգացման ուղին:

Նորատուսն այդ ժամանակներում էլ համարվել է Հայաստանի ու Գեղարքունյաց աշխարհի իշխանահատ բնակավայրերից մեկը՝ գտնվելով Գլին-Պարտավ քարավանային ճանապարհի հանգույցներից մեկում:

Ինչպես «Նորատուս» փաստագրական ու հանրագիտարանային նշանակության գրքում վկայում է պատմաբան, վիճագրագետ Սուրեն Սաղունյանը, Սահակ իշխանը, կառուցելով Սուրբ Աստվածածին եկեղեցին, այն դարձնում է եպիսկոպոսանիստ, ու այդուհետ, ութ դար շարունակ, Նորատուսը համարվում է Գեղարքունյաց գավառի վարչական, առևտրատնտեսական, մշակութային ու հոգեւոր կենտրոնը:

Միջնադարյան հայ նշանավոր պատմիչ, պետական ու եկեղեցական գործիչ Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ Սահակ իշխանը մահացել է 910-ական թվականներին ու թաղվել Նորատուսի սուրբ Աստվածածին եկեղեցու բակում, արեւմտյան դռան մուտքի ձախակողմյան պատի տակ:

«Հիրավի, եկեղեցու արեւմտյան պատի տակ, մուտքից ձախ, այժմ էլ ընկած է սեղանածեւ մի

նին: Ըստ երեւոյթին, 910-ական թվականների վերջերին Նորատուսում մարել կամ իրավազրկվել է Սյունյաց նախարարական տոհմը, եւ Նորատուսը Գեղարքունիք գավառի հետ Աշոտ Երկաթի օրոք մտել է Բագրատունյաց թագավորության կազմի մեջ», - եզրակացնում է Սուրեն Սաղունյանը:

Ծիշտ է, Նորատուսի եկեղեցու դռան մոտ գտնվող տապանաքարը վիճագիր արձանագրություն է չունի, սակայն իր վրա կրող պատկերաքանդակները միանգամայն արտացոլում են իշխանական մարդու առօրյան, ասպազենը, հանդերձանքը, անգամ ծառաներին: Ու չի բացառվում, որ վերը հիշատակված խաչքարը հենց այս տապանաքարի կողքից տեղափոխված լինի Սեւանա կղզի:

Սեղրակ Բարխուդարյանն իր հեղինակած «Դիվան հայ վիճագրության» աշխատության մեջ վերծանել է Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարավային պատի վրա ու բակի խաչքարտապանաքարերին պահպանված 28 արձանագրություն: Սուրեն Սաղունյանի աշխատասիրությամբ այստեղ վերծանվել է եւս 14 վիճագիր արձանագրություն, որը նախկինում դուրս է մնացել հրատարակիչների ուշադրությունից, իսկ եկեղեցու հարավային պատին պահպանված արձանագրության բովանդակությունը վերահիմաստավորվել ու ճշգրտվել է: Այսքանով հանդերձ, ինչպես փաստում է Սուրեն Սաղունյանը, թե Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում, թե պատմական գերեզմանոցում առկա են շուրջ 80 վիճագիր արձանագրություններ, որոնք դեռեւս ընթերցված չեն ու սպասում են իրենց հետազոտողներին ու բացահայտողներին:

Սեղրակ Բարխուդարյանի վկայությամբ՝ Նորատուսի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է 996 թվականին կերտված մի խաչքարի արձանագրությանը, որը հենց իր նախածեռությամբ տեղափոխվել ու պահպանվում է Հայաստանի պատմության քանգարանում: Այդ խաչքարը կանգնեցված է եղել հենց Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում:


Ըստ Սուրեն Սաղունյանի վկայության՝ Նորատուսի վարչակառավարական անձնակազմի եւ հարկապարտության հարաբերությունների վերաբերյալ չափազանց կարեւոր ու բացառիկ տեղեկություններ է հաղորդում եկեղեցու հարավային պատի մեջ եղած արձանագրությունը, որը ճիշտ չի մեկնաբանվել Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի ու Երվանդ Լալայանի մոտ: Վավերագրի իմաստը մանրազնին քննությամբ բացահայտել է Սուրեն Ավագյանը իր «Վիճակալ արձանագրությունների բառաքննություններ» աշխատության մեջ: Իսկ ի՞նչ է ասում այդ վավերագրությունը. «ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅՍ ԳԻՐ Ե ՆՈՐԱՏՈՒՑ ՇԱՅՆԱՅԻՍ, ԻՆԱՅԻՍ ԴԵՄԵԹԱՐՍ ՇԱՅ ԵՒ ԱՅԾԱՅՍ Ի ՎԵՐ ԿԱԼԱՔ ՎԱՎ ԳԻՆ ԱՐԵԻՆ ՀԱՍԱՐ ՈՉ ԳԶՐԻՆ ՏԱՆ ՀԱԿ, ՈՉ ՉԱՓՈՂԻՆ: Ա. ԵՅՆ ՄԻԻՍԱԼՈՒՄ ԳԶԻՐՆ ԼԾԵ, Ա. ԵՅՆ ՄԻԻՍԱԼՈՒՄ ՉԱՓՈՂՆ: ՎԱՅ ԳՐԻՍ ԱՍՏՈՒԾ ՈՒ ՍԱՅՆԱՐՈՐԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆԵ ՆԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՓԵԼ: ԵՍ ԹՈՒՆԿԱՍ ԳՐԵՑԻ»:

«Դժվարընկալ ու չմեկնաբանված հատվածների ստորեւ ներկայացված վերծանությանը վերջնականապես

պարզվում է վավերագրի հիմնիմաստը, այն է՝ Շահնա Ինան ու դեմեթարը, Ավագ Չաքարյանի բարեհաճությամբ, զիջել են չափողի եկամուտների, բերքի, կալվածքների շահույթների հաշվառող աշխարհագրի եւ զգիրի՝ շահնայի ու դեմեթարի կարգադրությունները, հրամանները ի կատար ածողի օգտին բնակչության եկամուտներից շահից եւ այժմեկաշու պարկեր մատուցելու պարտականությունից: Սակայն, ի հատուցումն այս շահութագրկության, գյուղացուն պարտադրվում է սեփական լծկաններով մեկ օր, բնականաբար, ծրի, անհատույց, վարուցանք կամ մի այլ հարկադիր գործ կատարել այդ սպասավորների համար: Կոռային այս պարտույթը տարածված էր ոչ միայն Նորատուսում, իսկ այս իրավավիճիկը կայացվել է 1230-ական թվականներին, երբ նույն Ինան եւ իր կին Սանդուխտը գնում են Ագարակ գյուղատեղին Արծվաքարի դուլակներ կոչվող հնավայրի տարածքում ու կառուցում ցայժմ պահպանվող եկեղեցին», - գրում է Սուրեն Սաղունյանը:

Հավելենք, որ հիշատակված Ագարակ գյուղտեղի տարածքում պահպանված եկեղեցին նույն Սալոյի վանքն է, որը հստակ երեւում է Գավառ-Մարտունի մայրուղու արեւմտյան բարձունքին, Սեւանա լճի ափին:

Սուրբ Աստվածածին եկեղեցու հարավային պատին առկա է արեւային ժամացույց՝ շրջանագծ եզրերում Ա.Բ.Գ.Դ.Ե.Զ.Է. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԵ տառերով ու տառակապակցություններով, որոնք արտահայտում են 1-ից 12 թվային արժեքները: Վեցերորդ



դարից սկսած հայոց հոգեւոր կառույցների հարավային պատին տեղադրվող արեւի ժամավույցներն ունեցել են կիրառական նշանակություն ու հանդիսացել են հարդարանքի յուրահատուկ միջոց:

Սուրբ Աստվածածին եկեղեցու ներսում դարերի ընթացքում կատարվել են թաղումներ, ուր ամփոփվել են հոգեւոր հայրերի աճյունները: Սակայն դրանց շարքում ամփոփված տապանաքարերից մեկի վրա կին է պատկերված: Ինչպես վկայում է եկեղեցու սպասավոր Միքայել Կյուրեղյանը, սա հայ հոգեւոր կյանքում բացառիկ դեպք է, քանի որ կանանց թաղումները եկեղեցու ներսում հայ եկեղեցու կողմից արգելված է եղել: Բայց այս փաստը գալիս է հաստատելու այն իրողությունը, որ Նորատուսի մյուս հին հոգեւոր տունը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կամ Դափուց վանքը, եղել է կանանց մեծաստան, ուր ծառայության մտած կույսերից մեկի մարմինն էլ ամփոփվել է այստեղ:

-Ամենայն հավանականությամբ, այս կինը եղել է միանձնուհի, հասել Մայրապետի աստիճանի, ապրել մաքրամաքուր ու սրբապետացող վարքով, իրենից ներկայացրել հոգեւոր արժեքներ կրող անձնավորություն, որի պատճառով էլ ձեռք է բերել սրբավայրի ներսում հանգչելու թուլություն, - ներկայացրեց Միքայել Կյուրեղյանը:

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հայրերն ու հավանավորները, բնական է, տեսել են բազմաթիվ ու բազմապիսի ասպատակություններ, բնական աղետներ, հայածանքներ, որոնց պատճառով էլ հաճախակի ընդհատվել է հոգեւոր այս կառույցի գործունեությունը:

/շարունակությունը՝ էջ 5-ում/




Նսկիզը՝ էջ 4-ում/

Այսպես, Հովհաննես Շահխաթունյանցի վկայությամբ, Գեղարքունյաց աշխարհը 1751-1787 թվականներին ենթարկվել է լեզգիների ձեռնարկած արյունալի չորս արշավանքներին, որոնք ամայացուցիչ են եղել գրեթե բոլոր բնակավայրերի, այդ թվում՝ Նորատուսի համար: Լեզգի հրոսակներից պաշտպանվելու նպատակով ժողովուրդը հավաքվել ու փորձել է պատսպարվել եկեղեցու ներսում ու տանիքին: Սակայն ավարառու դահիճները հրով այրել են եկեղեցին ու հրո ճարակ դարձրել անպաշտպան ժողովրդին: Այդ ոճրագործության հետքերը բացվել են միայն այն ժամանակ, երբ 1830 թվականին Արեւմտյան Հայաստանից վերաբնակության եկած հայ գաղթականները մաքրել են եկեղեցու ներքը հողի հաստ շերտից՝ այն վերանորոգելու ու հավատի տուն դարձնելու նպատակով: Հողի տակից նորաբնիկ հայերը դուրս են բերել տղամարդկանց, կանանց ու երեխաների այրված ոսկորներ: Շահխաթունյանցի ասելով՝ դեպքի մասին Նորատուսում վերաբնակվածներն իմացել են տեղացիներից, որոնց բեկորները դեռ շարունակել են գոյություն քարշ տալ բնաջնջման եզրին կանգնած իրենց բնօրրանում:

«Հարց է ծագում. ներգաղթից 10 տարի հետո գյուղում որոնումներ կատարող վիճակի առաջնորդին ուժեղ էր էին պատմում ավանդազրույցը, որը գրանցված էր ոչ մի տեղ: Իհարկե, ոչ եկվորները: Հետեւեցնելի է ուրեմն, որ այդ դառը հիշողությունների մորմոքն անթեղած պահում էին նահատակների շառավիղները՝ հին նորատուսցիները, եւ այն հաղորդում բարեխիղճ պատմաբաններին: Այս դիտարկամբ եւս կարելի է կռահել, որ Նորատուսը չի ամայացել, եւ հուսանք, որ ի հայտ կգան ավելի վստահելի փաստարկներ բնակավայրի չընդհատվող, շարունակական կյանքի, հին ու նոր նորատուսցիների միավորման, միաձուլման մասին»,- եզրակացնում է Սուրբ Սաղունյանը:

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմությանն ու պատմանշակութային արժեքներին



րին անդրադարձ են կատարել Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը եւ Երվանդ Լալայանը՝ նկարագրելով թե՛ պատմական անցքերը, թե՛ վիճագրությունների բովանդակությունները եւ խաչքարտապանաքարերի կառուցվածքներն ու քանդակները:

Նրանք եւս վկայել են լեզգիների աշխարհավեր արշավանքների ու գործած ոճիրների մասին:

Մեսրոպ Սմբատյանցի ներկայացմամբ՝ «Եկեղեցին մեծահռչակ աղոթարան եղած պետք է լիներ բազմության կրոնավորաց, ըստ որում շրջապատումն ուներ գանազան հին մաքուր քարով շինվածքներ, որոց մեջ արժանի տեսության է մի ուսումնարան կամ սեղանատուն միաբանից՝ 20 քայլ երկայնությամբ եւ 10 քայլ լայնությամբ, բայց որմունքն կիսակազմում: Եկեղեցվո մեջ եւ չորս կողմումն կան մասնավոր գերեզմանոցներ նախնայաց խաչքարերով զարդարված, որոց մեջ անվանի էր խաչքարն Մելիք Բարեքսեի, որ կանգնած էր այն մեծադիր, կարծր ու կոպիտ, 3 գագ երկայն եւ գագուկես լայն գերեզմանաքարի զխավերեն, որն իբր թե զարդարված էր աննշան անշուք կենդանյաց պատկերներով»:

Ասել է, թե 1860-ական թվականներին Նորատուսում հնագիտական ուսումնասիրություններ կատարելու եկած Մեսրոպ Սմբատյանցն անձամբ տեսել ու արձանագրել է եկեղեցուն կից միաբանների ուսումնարանի կամ սեղանատան կիսակազմումն փնտրելով:

Մեսրոպ Սմբատյանցն արձանագրել է նաեւ եկեղեցու ներսի վիճագրերի, ինչպես նաեւ Արեւի ժամացույցի գոյությունը:

«Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին պարսպապատ է, որի մեջը եւ շուրջը կան բավականաչափ խաչարձաններ եւ հասարակ տապանաքարեր: Ամենից ավելի ուշագրավ է մի տապանաքար, 3 մետր երկարությամբ, 76 սանտիմետր լայնությամբ 1,08 մետր հաստությամբ: Սրա երեսին նկարված է մի գավազան, որի երկու կողմը գր-

ված է. «Ես մելիք Ռիկես տապան շինեցի իմ իմուն մելիք Պարեքին»: Այս արձանագրության վերեւ քանդակված է մի ռեզեդյուր, որ կռվում է յուր վրա ցատկած վագրի հետ, իսկ ներքեւում մի եղջերու՝ ոտների տակ մի վիշապ»: Այս տապանաքարի արեւմտյան կողմը կանգնեցված է մի մի խաչքար, որի ճակատին գրված է. «Կամավն Աստճոյ, ես Մելիք Բարեքս կանգնեցի զխաչս վասն փրկութեան հոգվոյ իմոյ: Մելիքսեթ կանգող. Բարեքին է խաչս: Իսկ խաչքարի թիկունքին գրված է. «Կամավն Աստճո, ես, մելիք Բարեքս, եղբայրն իմ Ստեփանոս քահանէն, որդին իմ Գունկչայ բեկն, հայրն իմ Գունդուզ աղեն, եկինք Գանձակայ, շինեցինք կարմունճս, շինեցինք շրջապատս, կանգնեցինք զխաչերս, որք երկրպագեք, յիշեցեք ի Քրիստոս», -վկայում է Երվանդ Լալայանը:

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում մի քանի դար շարունակ ամփոփվել են ունեւոր դասի կամ հոգեւորականության ներկայացուցիչներ:

Այդ մասին փաստում են Սեդրակ Բարխուդարյանի «Դիվան հայ վիճագրության» աշխատության մեջ վերծանված վիճագրերը:

Պետրոս արեղայի խաչքարը թվագրվում է 1459 թվականով, Եղիսաբեթի խաչքարը՝ 1555 թվականով, Ալսիդատի խաչքարը՝ 1277 թվականով, Հակոբճանի խաչքարը՝ 1580, Տեր Առաքելի խաչքարը՝ 1586, Աբրահամի եւ կողակից Խանաթի խաչքարը՝ 1595, Ակոբի խաչքարը՝ 1606 թվականներով: Մի խաչքարի վիճագրություն էլ փաստում է, որ այստեղ հանգչում է նաեւ հռչակավոր Մելիքսեթ կազմողի աճյունը. «Սուրբ Խաչս բարեխոս Գրիգորին եւ Մելիքսեթ կազմողին՝ 1595 թվական»:

Խաչքարերից մեկն էլ դարերին է փոխանցել Յոհանես կազմողի անունը:

Վիճագրություններում արձանագրված են նաեւ Մելիք Բլբուլի կին Շահգադի, Տեր Ովանեսի, Սահակի, Մխիթարի, Ումրշատի, Շահսուլթանի, Մարտիրոս քահանայի, Լեսարի, Նրա ծնողներ Դիվատուրի, Մարքրտի, Քասպարի անունները:

Իրենց վրա մի քանի դարերի պատմություն կրող այս խաչքար-տապանաքարերը միաժամանակ քանդակագործության շքեղ նմուշներ են, որոնք հիացնում են իրենց զարդամոտիվներով, գեղագիտական ճաշակով ու մտահղացումներով:

Ճարտարապետական հորինվածքով Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին գմբեթավոր սրահով կառույց է, որը 7-րդ դարի շինությունների համեմատ ունի սեղմ համաչափություններ, ընդգծված ելուստներով որմնամույթեր եւ համեմատաբար փոքր տրամագծով գմբեթ:

Պատմական այլ աղբյուրների վկայությամբ՝ սրբատաշ, խաչածե, կամարակապ եւ անսյուն, 10 մետր երկարություն, ութ մետր լայնություն եւ ինը մետր բարձրություն ունեցող հոգեւոր այս կառույցը եւ հայ ճարտարապետության գլուխգործոցներից համարվող այս կոթողը կանգուն է մնացել մինչեւ 17-րդ դարի վերջերի աշխարհավեր երկրաշարժը, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Գառնիի երկրաշարժ անունով:

Հայ պատմիչ Չաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ այդ երկրաշարժը տեղի է ունեցել 1679 թվականի հունիսի 4-ին: Երկրորդը կրկնվել է օրեր անց՝ հունիսի 12-ին: Միջայել 2 ամսյանի վկայությամբ՝ զոհվել է շուրջ 8 հազար մարդ: Խոնարհվել է Գառնիի հեթանոսական տաճարը, բազմաթիվ այլ հոգեւոր ու աշխարհիկ կառույցներ:

Ավելի քան 7 մագնիտուս հզորության երկրաշարժից խոնարհվել են նաեւ Գեղարքունյաց աշխարհի հռչակավոր պատմաճարտարապետական կառույցները՝ Շողագավանքը, Կոթավանքը, Հայրավանքը: Այդ նույն արհավիրքից փլվել են Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու գմբեթը եւ պատերի վերեւի մասերը: Դժվար է ասել՝ արդյո՞ք հասցրել են վերականգնել երկրաշարժի փլվածքները, թե այն այդպես էլ այն կիսակործան է մնացել մինչեւ լեզգիների արյունալի ար-



Մյունյաց Սահակի իշխանի տապանաքարը

շավանքները, որոնք տեղի են ունեցել բնական արհավիրքից շուրջ մեկ դար անց, ու կործանաւար երկրորդ արվածը եկեղեցին կրել է լեզգիների կողմից գործադրած հրդեհի հետեւանքով:

1830 թվականից հետո Գեղարքունյաց աշխարհում հաստատված արեւմտահայ գաղթականները եկեղեցին ծածկել են գերաններով եւ դարձրել գործող հավատի տուն՝ կառույցի հատակը մաքրելով հողի շերտից, ավերածություններից ու այնտեղ կենդանի այրված մարդկանց ոսկորներից:

Սուրբ Աստվածածինը, սակայն, նորից կիսավեր վիճակի վերադարձել է խորհրդային անաստվածության տարիներին:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո նորատուսցիները շարունակ մտածել են եկեղեցին իր նախկին շքեղ տեսքի մեջ վերականգնելու ուղղությամբ, ինչը, բարեբախտաբար, տվել է իր ցանկալի արդյունքը: Նորատուս համայնքի ղեկավար Սուրադ Հարությունյանի եւ համայնքապետարանի աշխատակիցների կազմակերպչական ջանքերի շնորհիվ, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հետ համագործակցությամբ Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու շինարարությունը սկսվեց 2010 թվականից, Նորատուսում ծնված, բայց արտերկրում բնակվող Հայկ Սաղաքեյանի բարերարությամբ: Միջոցների սղության պատճառով, սակայն, շինարարությունն ընդհատվեց որոշակի ժամանակահատվածում եւ վերսկսվեց նորատուսցի խաչիկ Կարապետյանի բարերարությամբ:

Բացի եկեղեցու վերականգնումը, բարեկարգվեց նաեւ նրա տարածքը, ստեղծվեց ժամանակակից ու գեղեցկատես պուրակ:

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին բացվեց եւ վերածվեց 2019 թվականի սեպտեմբերին՝ ձեռամբ Հայ Առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանի եւ Մայր Աթոռի լուսարարապետ Հովհանն Եպիսկոպոս Հակոբյանի:

Այս հայրենակներ ձեռնարկների շնորհիվ այսօր Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին դարձել է Հայաստանի զբոսաշրջային ամենագրավիչ կառույցներից մեկը, որտեղ այցի են գալիս հազարավոր զբոսաշրջիկներ թե՛ հայաստանից, թե՛ աշխարհի տարբեր երկրներից՝ ծանոթանալու Հայաստանի բազմադարյան պատմությանն ու պատմանշակութային արժեքներին:

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին միաժամանակ դարձել է ուխտագնացության կենտրոն ու սրբավայր թե՛ Հայաստանում, թե՛ աշխարհի տարբեր ծագերում բնակվող հայերի համար:

Խնորով Խլլաթյան



ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Նսկիզբը՝ նախորդ համարներում/

Անդրոյի մայրը կենդանի է, եւ մշտապես հետաքրքրվում է որդու գործերով, հոգում ու անհանգստանում է նրա համար՝ «Անդրանիկ, եղ ո՞վ է խոտ բերում»: «Անդրանիկ, մեղուն վայ թե ձագ է տալիս»: Անդրոն լսում է, պատահում է՝ արձագանքում է, պատահում է՝ ոչ, բայց միշտ մորը վերաբերվում է հարգանքով, համբերությամբ՝ անգամ հոգնության ու զայրույթի պահին:

Ավանդականի եւ մորի հարաբերություններում, ընտանեկան փոխհարաբերությունների քննության մեջ, Մաթեւոսյանի հերոսների գերակշիռ մասը հանդես է գալիս՝ որպես հայոց տան ավանդականության կրող:

Ազգերի պատմական ընթացքի մեջ ձեւավորված ավանդույթները այն նախադրյալներն են, որոնք կարող են հիմնարար դեր կատարել հասարակությունների կայունության հաստատման համար: Օրգանական համերաշխությունը, որը բխում է միջանձնային հարաբերություններից, կարող է իրականություն դառնալ միայն ընտանիքի ներսում: Մաթեւոսյանական գյուղաշխարհի խաղաղ համակեցության նախադրյալները հայ ընտանիքի կեցության հնավանդ եղանակները: Այդ եղանակները սովորությունների, ժառանգորդության եւ գեներտիկ հիշողության ուժով սահմանում են ընտանիքի անդամների տեղը, դերը, գործառույթը, իրավունքներն ու պարտականությունները: Այս մարդկանց գիտակցության մեջ առաջնային նշանակություն ունեն հարգանքն ու մեծարանքը, սերն ու հոգատարությունը յուրայինների նկատմամբ: Մաթեւոսյանի հերոսները հետեւում են կյանքի այս պարզ կանոններին եւ ապրում են ոչ այնքան բարեկեցիկ, որքան՝ ինքնաբավ կյանքով: Նրանց առաջնորդողը ներքին բարոյական նորմերն են՝ պատասխանատվության գիտակցումը, տքնաջան աշխատանքով հացը վաստակելու ծանր եւ բավականություն պատճառող պարտականությունը, անխաղախ բնավորությունը, հաշտ ու խաղաղ համակեցությունը:

«Աշնան արեւ» վիպակը մեր առաջ բացում է Ծմակուտի լայնահուն կյանքի բազում էջեր: Փոքր ու նեղ է գյուղը, սակայն մարդկային ու սիրառատ են նրանում ձեւավորվող հարաբերությունները: Ընդարձակվող կյանքը նոր հնարավորությունների, նոր հարաբերությունների տեսլականով հեղաբեկում, փոփոխում, նոր ընթացք է հաղորդում շտապող բնավորություններին: Այդպիսի բնավորությամբ աչքի է ընկնում Աղունը: Նրա հայացքը աշխարհին միանգամայն ուրիշ է, որը չի համընկնում Ծմակուտի դարավոր արժեհամակարգի, նրա բարձր արժեքների ավանդույթի, սովորույթի, բարոյականության, մարդկային դիմագծի պահպանության սկզբունքների հետ: Ծմակուտի արժանի ներկայացուցիչները հավատարիմ են իրենց եզերքին, մինչդեռ փոքր-ինչ հեռվից եկած հարսը չի ցանկանում, եւ չի կարողանում որդեգրել այն լավագույնը, ընտանեկանը, դարավորը, որը պահպանել է հնամենի Ծմակուտը:

Սիրո, ջերմության եւ փոխօգնության առանձնահատուկ հիմքերի վրա է խարսխված «Հացը» պատմվածքի՝ ազնիվ գործունեությամբ մի կտոր հացի շուրջ հավաքվող ընտանիքը: Ամուսինների նպատակը մեկն է, բայց մեծ է, բարձր է, վեհ է եւ կարելի է իրականացնել միայն մեծ չարչարանքների գնով: Այդ վեհ նպատակը փոխանցվել է մեզ մեր հեռավոր անցյալից: Ուստի պատահական չէ, որ ազգագրագետները հայերի բնութագրական կողմերից են համարում նաեւ ուսումնաստեճությունը:

Ազնվագույն աշխարհ է «Մենք ենք, մեր սարերը» վիպակի հոգեւոր աշխարհը: Վիպակում հովիվների հանրապետությունն իր պաշտպանական բոլոր լծակներով մի ամբողջական, կայացած ընտանիք է հիշեցնում, որտեղ մեկի հոգսը բոլորի հոգսն է: Այս-

տեղ մանրուքները չեն կարելու, ոչ ոք չի հիշում, թե ով է քանի ոչխար է մորթել: Վիպակում առանցքային տեղ ունի մարդը: Այս բանը պատահական լինել չէր կարող: Մեծ գրողը առանձնահատուկ կարեւորություն է տվել մարդուն. «Ես ուզում եմ լինել նրանց ճակատագրի տարեգիրը, նրանց, ովքեր անհատականություն են, բայց ընդհանուր ամփոփագրերում նշվում են որպես մարդկային միավորներ, իսկ մեծ ողբերգակների դրամաներում ներկայացվում են որպես ֆոն, վատ գրողների՝ ամբոխ», - հարցազրույցներից մեկում ընդգծել է Յ. Մաթեւոսյանը:

Մաթեւոսյանի հերոսները նույնպես կարեւորում են մարդուն, նրա հետ հարաբերությունների որակը:

Այս մեծ ընտանիքում ամուր են ծանոթ-բարեկամական բոլոր հնավանդ կապերը: Այդ կապերը թույլ չեն տալիս, որպեսզի համազույն-դացի Ռեւազի ոչխարները գիտակցվեն իբրեւ ուրիշի ապրանք, որպեսզի մեղադրվող հովիվներից յուրաքանչյուրը փորձի օրենքի առջեւ ինքն իրեն արդարացնել. այնտեղ է արդարացվել բոլորը կամ ոչ ոք: Հովիվները դատում են օբյեկտիվորեն եւ ընկերների խնդիրներին նայում են հարազատի տեսանկյունից:

Գիջորը քաղաքին տվել է ամենաթանկը՝ իր զավակին, ինչի հետեւանքով ներսում դատարկ տարածություն է գոյացել: Ժամանակն իր հետ նոր վարքուբարք է բերել եւ արտաքին գեղեցկությունը դարձել է գրավիչ, իսկ ներքին բարոյականությունը՝ երկրորդական: Երիտասարդները քաղաքում գայթակղվում են նոր հորիզոնների տեսլականով, ինչի հետեւանքով ձեւավորվում են մարդկային նոր որակներ եւ նոր աշխարհայացք, աստիճանաբար փոխվում են բարոյական արժեքները: Այս բանի վկայությունն է դազախեցի Սիմոնի ընտանիքը, որտեղ հոր ու որդու փոխհարաբերությունները խիստ անսովոր են. երեխայի մոտ չի արժեւորվում հոր խնդրանքը, իսկ հորը չեն հետաքրքրում երեխայի ներկան ու ապագան: Մյուս կողմից զգացվում է արտաքին աշխարհի ազդեցության շունչը. անթիվ հայկական ամուսնների ընտրանու մեջ Սիմոնը որդուն անվանել է Մակեթ: Օտար անունը կրող երեխան հեռու է նաեւ մեծահասակների հետ վարվեցողության կանոններից: Սիմոնին այլեւս հարկավոր չէ կով պահել եւ ոչ էլ ձեռքով հունձ անել՝ նման գործերն արվում են տեխնիկայով: Սա նշանակում է, որ փոխվել է մարդու աշխարհայացքը, բարոյական աշխարհը, կենսամակարդակը: Առեւտրատնտեսական նոր հարաբերությունները որոշ չափով թափանցել են Ծմակուտ, որոշ չափով էլ՝ Ղազախ: Փոխվել է գյուղերի ու գյուղաքաղաքների ընդհանուր դիմագիծը՝ շեղվելով մարդուն ազնիվ պահող ընթացքից:

ԿԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ Յ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«զգագրության մեջ հայ ժողովրդի ընտանեկան կենցաղն ուսումնասիրողին վիճակված է գործ ունենալ ընտանիքի երկու հիմնական ձեւի՝ նահապետական մեծ ընտանիքի՝ գերդաստանի, եւ դրանից անջատված, փոքր ընտանիքի հետ: Այս ձեւերը միմյանցից էապես տարբերվում են ինչպես տնտեսական ու իրավական հիմքով, այնպես՝ կազմով ու կառույցով», - ընթերցում ենք «էջմիածին» ամսագրի էջերում:

Նահապետական գերդաստանից բաժանվող ընտանիքները, դիմելով ինքնուրույնության, ունենում էին համեմատաբար փոքր թվով անդամներ, ձեւավորում էին նոր «փոքր կամ անհատական ընտանիքներ», սակայն ավանդականության եւ սովորույթային մակարդակում, հիմնականում, մնում էին պահպանողական: Փոքր ընտանիքի գլուխը տղամարդը, շա-



րունակում էր աշխատել եւ նյութական բարեկեցության մեջ պահել իր օջախը: Հնուց ավանդված սովորության համաձայն՝ ընտանիքի տղամարդն իր ծնողների, մանավանդ հոր գերդաստանի նահապետի ներկայությամբ, անհարմար էր զգում սիրել իր երեխաներին, քանի որ այս բանը անթափ էր համարվում հայոց մեջ, սակայն փոքր ընտանիքում նա կարող էր իրեն թույլ տալ գրկել, զգվել, երեխաներին, զբաղվել նրանց հետ: Հնուց փոխանցված վերաբերմունքն առանձնապես չէր փոխվում կնոջ նկատմամբ: Այս հարցում պետք է նկատի առնել իզական սեռի բոլոր ներկայացուցիչներին: Նահապետական շրջանում նրանց իրավունքները նեղ ու սահմանափակ են եղել: Այս կադապարը նրանց շուրջ ձեւավորվել է ի ծնե՝ «Մի բռռ տղան օխտը սաղ աղջկանից լավ է» ժողովրդական իմաստությամբ: Աղջիկ երեխան ստորադասվել է անգամ ընտանիքի ամենափոքր տղային եւ նրա առաջ որեւէ կերպ գլուխը բարձրացնելու իրավունք չի ունեցել: Այդպիսի վարվեցողություն է պահանջվել նաեւ հարսից՝ փոքր տեղաբնակ պարագայում: Կինը հարկադրված է եղել ենթարկվել ամուսնուն: Այս մասին առանձին վկայություններ կան մի քանի ազգագրագետների մոտ: «Իզական սեռը մանկությունից սկսած մինչեւ պառավությունը կատարելապես ստորադասված է արական սեռին. դեռ աղջիկ ժամանակ նա ենթարկվում է հորը եւ եղբայրներին, - նկատում է Ե. Լալայանը: Քույրը իրավունք չունի նույնիսկ իրենից կրտսեր եղբոր հարվածներին պատասխանել. արդար, թե մեղավոր... Ամուսնացած ժամանակ նա միանգամայն ենթարկվում է յուր «գլխատեր» ամուսնուն, իսկ այրի ժամանակ կամ տեղերին, կամ յուր որդիներին»:

Արական սեռի գերադասությունը իզականի նկատմամբ առավել սուր եւ ծանր արտահայտություն է ունեցել Ախալքալաքում: Կինն ամուսնու կողմից ընկալվել է որպես ընտանիքի աշխատանքներն իրականացնող, ամուսնու ցանկություններին հագուրդ տվող, իրավագուրկ մի անձ, սակայն տարվա ընթացքում ավելի շատ է աշխատել, քան ամուսինը: Մթերքի նկատմամբ իրավագուրկ լինելով՝ ապավինել է սկեսրոջ տված սննդին, ամուսնուն օգնել է բազմաթիվ գործերում այդ դեպքում անգամ երբեմն, նրա կողմից ենթարկվելով ֆիզիկական բռնության: Կինը խոնարհությամբ է կատարել նաեւ ընտանիքի բոլոր անդամների ցանկությունները՝ մեծից փոքր. «Նրան իրամայրում են ոչ միայն կեսարը, կեսուրը եւ ամուսինը, այլեւ մեծ տեղերկնիկներն ու տեղերը: Նա առանց կեսուրի թույլտվության ոտը մի քայլ անգամ դուրս դնելու իրավունք չունի: Նույնիսկ յուր հարազատ որդուն առաջին տարին նա ծիծ չի տալիս, մինչեւ կեսուրը չհրամայե... Ջրկված անձնական ազատությունից, դատա-

պարտված մշտական լռության, նա ստիպված է կատարել տան բոլոր ծառայությունները, օգնել ամուսնուն տնային եւ դաշտային աշխատանքի մեջ», - դարձյալ նշում է Ե. Լալայանը:

Լռվա «փոքր ընտանիքում» գավակները մեծացել են բարի եւ քնքուշ սրտով: Ընտանիքի հայրը, իհարկե չանտեսելով նահապետական գերդաստանից ժառանգած կարգուկանոնը, վարքուբարքը, չիեռանալով առանցքային կարեւորության հարցերից, իրեն թույլ է տվել հայրական սիրով եւ հոգատարությամբ շրջապատել երեխաներին, իսկ կնոջ հետ պարբերաբար խորհրդակցել է ընտանեկան հարցերի շուրջ, չնայած այն բանին, որ օտարների ներկայությամբ ամուսինները խստագույնս պահպանել են հաղորդակցվելու ընդունված կարգը: Նահապետական վարքականոնների նկատմամբ կատարվող այս համեստ շեղումները ժամանակի ընթացքում հանգեցրել են դրական տեղաշարժերի: Ձեւավորվող ընտանիքի ներսում, կինը, դառնալով ամուսնու խորհրդատուն, ծանոթացել է նրա եւ՛ հոգսերին ու հաջողություններին, եւ՛ աշխատանքի մանրամասներին ու դրանից ստացվող արդյունքներին, եւ՛ բուն նյութական վիճակին: Եթե ընտանիքը հայտնվել է նյութական սուղ պայմաններում, ապա կինը սկսել է տնտեսել եղած միջոցները՝ ծախսելով խնայողաբար, առաջնահերթությունը տալով անհետաձգելի կարիքները հոգալուն: Ամուսինն իր հերթին ձգտել է առավել աշխատասեր եւ հոգատար լինել:

Կինը որպես ամուսնու նեցուկ

Ծմակուտյան ընտանիքներից մեկը Աբելի ընտանիքը, անշուշտ, նահապետական տարրեր է պարունակում իր մեջ: Այն բաղկացած է որդիներից ու աղջիկներից, հարսներից ու թոռներից, որտեղ ընտանիքի հոր առաջ ոչ ոք գլուխ չի բարձրացնում, մտքին եկածը չի ասում: Երեխաների, հարսների ու թոռների եւ տնտեսական գործերի նկատմամբ իրավունքն ու պատասխանատվությունը, ինչպես նաեւ մառանի տնօրինությունը պատկանում են տան տիրուհուն:

Աբելի ընտանիքում բաժանության մասին ոչ ոք չի մտածում. «Եվ թեպետ 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին այդ ընտանիքն արդեն հիմնականում կորցրել էր իր դերը, - մեծ ընտանիքի մասին գրում է ազգագրագետ Վ. Բդոյանը, - այնուամենայնիվ, նրա տրոհումն ու բաժանված ծանր ազդեցություն էր ունենում ոչ միայն նահապետի ու նրա կնոջ, այլեւ հենց բաժանվողների վրա»:

Սիմոնի եւ Աղունի ընտանիքը «փոքր ընտանիքի» տիպակ օրինակ է, որը ձեւավորվում է դառնացնելով հատկապես Աբել ապիին. «Աբել ապիին լաց եղավ եւ տնքաց. «Գնո՛ւմ եք, Սիմոն ջան, մեզ թողնո՛ւմ եք, բալա ջան», - ընթերցում ենք «Աշնան արեւ» վիպակում:


Սիմոնը հանդարտ, հավասարակշռված, ծնողասեր եւ համեստ մարդ լինելով, երբեւէ չէր նախաձեռնի մեծ ընտանիքից հեռանալու եւ սեփական տանիքը ստեղծելու գործը: Այդ ձեռնարկի հեղինակը Աղունն է՝ «տուն ենք սարքելու» իր աներկբա որոշումով: Այս գաղափարը նահապետական կարգուկանոնից տարբերվող, հնամենի կացութեւեներին եւ նորմերին սակավադեպ բնորոշ գաղափար է, սակայն ամուսինների աշխատասիրության, կազմակերպվածության, մեկի վրա մյուսն ավելացնելու կարողության շնորհիվ պատկանում է հաջողությամբ եւ վկայում է նաեւ հայկական ընտանիքում կնոջ նշանակալի դերի մասին:

/շարունակելի/
Ռուզան Վարդանյան

Այլևս մեզ հետ չէ Հայոց հայրենիքը կառուցող ու պաշտպանող նվիրյալ անձնավորությունը՝ Մարտունի քաղաքի բնակիչ, շինարար, Արցախյան ազատամարտի մասնակից, սիրված ծնող, ընկեր ու բարեկամ Համլետ Գվիղոնի Սիմոնյանը:

Նա ծնվել է 1944 թվականի դեկտեմբերին, ՀԽՍՀ Մարտունու շրջանի Աստղածոր գյուղում: Ավարտել է Աստղածորի միջնակարգ դպրոցը, 1963-1965 թվականներին ծառայել ԽՍՀՄ բանակում: Ծառայությունից վերադառնալուց հետո աշխատանքի է անցել Մարտունու շրջանի մի շարք շինարարական կազմակերպություններում՝ եռակցողի մասնագիտությամբ: Տասնամյակներ շարունակ նա աշխատել է շրջանի կարելորագույն կառույցներում՝ շենագնելով ու ծաղկեցնելով հայրենի եզրերը:

Արցախյան շարժման սկզբից անդամագրվեց «Հայ Դատ» հասարակական-քաղաքական կազմակերպությանը եւ նրա մարտական ջոկատի կազմում մասնակցեց հայրենի երկրի սահմանների պաշտպանությանը, ինչպես նաեւ՝ Քարվաճառի ազատագրական մարտերին: Մի



կողմ դրած բազմամղան ընտանիքի առօրյա հոգսերը՝ նա օրերով, երբեմն էլ ամիսներով, զենքը ձեռքին, գիշերում էր սահմաններում, ավելի հաճախ՝ բաց երկնքի տակ, որպեսզի այդպես կանխեր թշնամու մուտքը, որպեսզի այդպես անվտանգ պահեր իր հայրենիքն ու ընտանիքը: Իսկ խաղաղ տարիներին, անգամ կենսաթոշակի անցնելուց հետո,

ԵՐԵՎ ԵՐԱՆ, ՈՐ ՄԱՐԴԻ ԳԵԱՅ ԱՆԱՐԱՏ

Համլետ Սիմոնյանը շարունակեց շինարարի իր աշխատանքը մարզի տարածքում ու նրա սահմաններից դուրս՝ հոգալով իր ընտանիքի հանապազօրյա հացը ու մասնակցեցնելով հայրենի աշխարհի շենագնանը:

Ճակատագրի բերումով Համլետ Սիմոնյանը 2016 թվականի ապրիլի 1-ին այցեցել էր Արցախ տեսակցելու իր Հայոց բանակում ծառայող իր թոռանը՝ Լեւոն Սարոյանին:

Վերադարձի ճանապարհին նա հայտնվեց ռազմագործողությունների տարածքում, իսկ մարտական առաջադրանքը կատարելիս վիրավորվեց Լեւոն Սարոյանը:

Արցախյան 44-օրյա պատերազմում էլ Համլետ Սիմոնյանը, չնայած արդեն իր պատկառելի տարիքին, փորձում էր ամեն կերպ սատարել հայ մարտիկներին: Նա ծանր էր տանում մեր հայրենիքին պատուհասած վերջին տարիների աղետը, Արցախի կորուստը, ոչ մի կերպ չէր համակերպվում պարտության ու դառը իրողության հետ:

Համլետ Սիմոնյանը ազնիվ ու շիտակ բնավորություն ուներ, մարդամոտ էր ու ուշադիր շրջապատի, բարեկամների ու հարազատների

նկատմամբ: Վայելում էր մարտական ընկերների ու շրջապատի սերն ու հարգանքը, միշտ կանգնում կարիքի մեջ հատնված մարդկանց կողքին, իր խրատներով ու խորհուրդներով կողմնորոշում շատերին:

Ջրուցասեր էր, աչքի էր ընկնում նուրբ հումորով ու սրախոսությամբ, ընթերցասիրությամբ, որը ժառանգել էր իր հորից՝ Առաջին աշխարհամարտի եւ 1918-20 թվականների Վարդենիսի ինքնապաշտպանական մարտերի մասնակից, հայրենասեր Գվիղոն Սիմոնյանից: Ու հենց այդ նույն հայրենասիրության կրողը դարձավ ինքը՝ այն սիրով փոխանցելով իր զավակներին ու թոռներին:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա արժանացել է բազմաթիվ պարգևների:

Համլետ Սիմոնյանը երկրային կյանքում թողեց սիրող կին, երեք զավակ, չորս թոռ, բազմաթիվ ընկերներ ու հարազատներ, ովքեր միշտ վառ ու կենդանի կպահեն նրա հիշվող անունն ու հայրենապահպան գործերը:

Մարտունու համայնքապետարան «Գեղամա աշխարհ» թերթ Մի խումբ ընկերներ

ԿԱԹՆԵՂԲԱՅՐԸ

1963 թվականն էր: Առավոտյան կանուխ հարսս իր սենյակից մտավ մեր սենյակ եւ դիմեց մորս:

-Մամա, երեխան գիշերը անհանգիստ էր, լավ չի քնել: Մայրս անհանգստացավ եւ ավելի ուշադիր զննեց երեխային՝ եղբորս տղային: Պարզ դարձավ, որ հարսն՝ եղբորս կինը, հղի է, ուստի նրա կրծքի կաթը բացասական ազդեցություն է գործում երեխայի ստամոքսաղիքային համակարգի վրա: Մայրս գիտեր, որ մեր երիտասարդ հարեւանուհիներից մեկը վերջերս ծննդաբերել էր եւ աղջիկ երեխա էր ունեցել: Ըստ մեծական փորձի՝ աղջիկ ունեցած ծննդկանի կաթը այս դեպքում շատ օգտակար էր:

Մայրս շտապեց վերը նշված հարեւանուհու մոտ եւ խնդրեց նրա օգնությունը: Հարեւանուհին մեծ

սիրով եւ հոժարակամ կատարեց մորս խնդրանքը: Որոշ ժամանակ անց երեխայի վիճակը կարգավորվեց: Մայրս իր ձեռով շնորհակալություն հայտնեց հարեւանուհուն:

Անցան տարիներ: Օրերից մի օր եղբորս տղան եկավ մեր տուն եւ դիմեց մորս:

-Տատ, այն աղջիկը արդյո՞ք իմ քույրը չի, որի մոր կաթը ես փոքր ժամանակ կերել եմ:

-Իհարկե՛, բալես, - շեշտեց մայրս ու գրկեց թոռանը:

Իրականում ի՞նչ էր պատահել:

Դպրոցում տղաներից մեկը սիրահետել էր աղջկան՝ կաթնաքոջը: Եղբորս տղան նկատել էր եւ զգուշացրել տղային: Տղան արհամարել էր կաթնեղբոր ասածը, նույնիսկ երգիծանքով շեշտել, թե

կարո՞ղ է պատահի թե նա է ցանկանում սիրահետել աղջկան: Այդ խոսքի վրա մեր տղան բռունքով է հասկացնում նրան:

Հաջորդ օրը մեր տուն եկավ հարեւանուհին:

Նա այսպես դիմեց մորս:

-Սիրելի տիկին Սիրանուշ, ես Ձեր թոռան ցավը տանեմ, նա իմ աղջկա եղբայրն է: Գիտե՞ս, թե ինչպես է պաշտպանել եւ տեր կանգնել իմ աղջկան:

-Երբեք զարմանալի չէ, չէ որ թոռս աղջկադ կաթնեղբայրն է:

- Հալալ լինի իր կերած կաթը, որ ես տվել եմ նրան, -ասաց հարեւանուհին:

Սամվել Աղլամազյան

ՄԻ ՀՈՒՇ ՊԱՀԱՐԵԻՑ ԽՈՐՍ ՊԱՏՄԱՆԸ

1950 թվականն էր: Նոր-Բայազետի պետական դրամատիկական թատրոնը բեմադրել էր Քաջ Նազարե կատակերգությունը: Փոքր տղայիս հետ զննեցի էի՝ ներկայացում դիտելու: Այդ տարիներին ամուսինս՝ Բաբկեն Աղլամազյանը, աշխատում էր թատրոնում, որպես բեմի գլխավոր վարպետ:

Թատրոնում ենք: Դահլիճը լեւի-լեցուն է: Քաջ Նազարի դերում պետք է հանդես գա Հայաստանի եւ Վրաստանի վաստակավոր արտիստ Պահարեն թատրոնի դերասանական խմբի հետ:

Ահա սկսվում է ներկայացումը: Բոլորս ուշադիր եւ կլանված նայում ենք ներկայացումը: Շուտ եկա ու նկատեցի, որ երեխասս կողքիս չէ: Նայեցի՝ տեսնեմ տղասս արդեն հասել է դեպի բեմ տանող աստիճանը: Նա արագ քայլերով բարձրանում էր: Վերջին քայլը արեց աստիճանով՝ ու հասավ բեմ ասելով:

-Ես հելա:

Վարպետը իսկույն փակվեց, եւ կուլիստների հետեւում կանգնած հայրը եկավ եւ տարավ կու-

լիսները եւ կամենում էր բարկանալ՝ երեխայի վրա: Այդ պահին վրա է հասնում Նազարը /Պահարեն/ եւ ասում:

-Այս տարիքում ենք, սակայն կրկին հուզմունքով ենք բեմ բարձրանում: Բայց այս երեխան 3 տարեկան է եւ ռիսկ է արել բեմ բարձրանալ, արդյո՞ք կարելի է բարկանալ նրա վրա: Հետո արտիստը երեխային հյուրասիրում է քաղցրավենիքով:

Սամվել Աղլամազյան

ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ Է ԼՃԱՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾԵՆՔԸ



Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել է ընթացում են մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Լճափի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 293 միլիոն 808 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառա-

վարությունը, 25 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Բացի արտաքին հիմնական պատերից, շենքն ամբողջությամբ՝ երկու մասնաշենքով, հիմնանորոգվելու է: Փոխվելու է նաեւ տանիքը, իրականացվելու է

սեյսմազինվածության բարձրացում:

Այժմ կատարվում են հատակի, միջնորմների, սանհանգույցների, դռների եւ պատուհանների, պատերից գաջի եւ սվաղի քանդման աշխատանքները:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել առաջիկա երկու տարիների ընթացքում:

Ավարդ Սամուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ ԱՆԱՄԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում արդեն հայտնի են 2025 թվականի տնտեսական տարվա անասնազխաքանակի հաշվառման արդյունքները:

Ինչպես տեղեկացրին ՀՀ վիճակագրության ազգային ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալությունից, 2026 թվականի հունվար ամսվա դրությամբ Գեղարքունիքի մարզի գյուղացիական եւ ֆերմերային տնտեսություններում հաշվառվել է 69 հազար 788 գլուխ խոշոր, 100 հազար 275 գլուխ մանր եղջերավոր մայրեր են 1845 գլուխը: 2025 թվականի մարտ ամսից Գեղարքունիքի մարզի տնտեսություններում մեկնարկել է ընթացում են անասնազխաքանակի պատվաստումների եւ համարակալման աշխատանքները:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 76 ԵՐԵՆԸ

2026 թվականի մարտ ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող առողջապահական հիմնարկներում ծնվել է 76 երեխա 38 տղա, 38 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 76 ծնունդներից 14-ը ծնվել են Գավառի բժշկական կենտրոնում, 32-ը՝ Մարտունու

չուններ: 69 հազար 788 գլուխ խոշորից կովեր են 29 հազար 219 գլուխը, 100 հազար 275 գլուխ մանր եղջերավորներից մար ոչխարներ են 68 հազար 521 գլուխը: 9934 գլուխ խոզերից մայրեր են 1845 գլուխը:

2025 թվականի մարտ ամսից Գեղարքունիքի մարզի տնտեսություններում մեկնարկել է ընթացում են անասնազխաքանակի պատվաստումների եւ համարակալման աշխատանքները:

«Գեղամա աշխարհ»

ծննդատանը, 23-ը՝ Սեւանի բժշկական կենտրոնում, 7-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոնում: Ճամբարակի առողջության կենտրոնում մարտ ամսին ծնունդ չի գրանցվել:

2025 թվականի մարտ ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժօժիմարկներում լույս աշխարհ են եկել 115 երեխա՝ 55 տղա եւ 60 աղջիկ: